ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Հայրական քաղցրագոյն սիրով ենք ողջունում այս պատուաբեր հանդիսութիւնը. որով նշտում է տասնամեայ վաստակը Հայ Օգնութեան Ֆոնտին (Հ.Օ.Ֆ.). որ բարիքների առատահոս մի աղբիւր եղաւ մեր Մայր Հայրենիքի տառապահար ժողովրդին. Գիւմրիի շրջանում պատահած ահաւորագոյն և աղետալի երկրաշարժին հետևանքով:

Անցնող տասը տարիների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ամենէն կենտրոնական թեմերից Ամերիկահայոց Արևելեան թեմը հաստատեց այդ ֆոնտը. որ մեր ժողովրդի ողբերգական ծանր վիճակը թեթևանայ. և մեր հայրենիքն ու ազգը չընկճուին այդ աննկարագրելի աղէտից: Մնունդի. ջուրի անմիջական մատակարարում. հագուստի և դեղօրայքի հայթայթում. դպրոցների վերաշինութիւն. դպրոցական երեխաների լայն օժանդակութիւն և բազում այլ տեսակի մարդասիրական. ընկերային. բարեգործական շարունակական օգնութիւններ իսկապէս փրկարար դեր կատարեցին մեր բազմաչարչար և զրկեալ ժողովրդի զաւակներին ամենուրեք:

Մեր Հայց. Առաքելական Եկեղեցին Քրիստոսի օրինակին՝ «Բարի Սամարացու» կերպարի ներքոյ կատարեց և կատարում է իր պարտքը՝ մղուած Աստծու և հայ ժողովրդի սիրուց: Որովհետև քրիստոնէական հասկացողութեամբ ՄԷՐ կը նշանակի զոհողութիւն. ծառայութիւն. գործ ի բարին ի վայելում կարօտեալներին:

Մենք մեր հաւատքի օճախից. Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Մեր օրհնութիւնն ենք առաքում թեմի ժրաջան Առաջնորդին. թեմական իշխանութեան. Հայ Օգնութեան Ֆոնտի Յանձնախումբին. Հայ Օգնութեան Ֆոնտի անձնակազմին իրենց նուիրեալ աշխատանքի համար:

Աղօթում ենք առ Ամենաբարին Աստուած. որ ցաւը. վիշտը. տառապանքը օրից օր պակասին. և փոխարէն. բարեկեցութիւնը իր տեղը վերգտնի մեր ժողովրդի կեանքում:

Ողջ լերուք ի Տէր. զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն. և յաւէտ օրհնեալ ի Մենջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19 Ապրիլի 1999
Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին